

լուն մեծապես կրնա ստանալ: Ուստի հայր մը մի-
սանգամ չհամարձակիր որդւոյն առջեւ անպատ-
շաճ կերպով խօսելու կամ գործելու երբ անի-
կայ սիրուն պարզամտութեամբ մը իրեն կը դառնայ
կըզրուցէ. « Սյա ըսածդ կամ ըրածդ չվայելեր;
հայրիկ... » եթէ որդւոյն այս տղայական ու ան-
կեղծ դիտողութեամբը հայրն ինքզինքը չշտկէ,
գէթ կըզգուշանայ որ մէկ մըն ալ որդւոյն առջեւ
քաղաքավարութեան կանոնացը դէմ չգործէ: Եւ
որպէս զի ծնողք ազատ ըլլան որդւոց այսպիսի
դիտողութիւններէն, ի հարկէ պետք է որ իրենք
նախ քաջ գիտնան քաղաքավարութեան կանոն-
ներն եւ յետոյ անոնց սովորեցնեն: Ապա ուրեմն
քաղաքավարութեան ուսումն ալ ամեն հասակի
հարկաւոր է:

ԳԵՇ ԿՐԹՈՒԱԾ ՏՂԱՅ.

Ա.

ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ՈՒ ՇԱՐԺՈՒԱԾՔԻ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ.

1. Առաւօտը ելլելուն պէս երեսը, ակօսները,
ականջն ու ձեռքը լուալու եւ գլուխը սանտրելու
անփոյթ կըլլայ:

2. Եղունգները կըկրծէ, եւ կամ մարդու
առջեւ զանոնք կըկտրէ ու կըմաքրէ:

3. Ինչ որ ձեռքն ունենայ, գրիչ, բուրդ, ձեռնոց,
ծաղիկ, մէկէն բերանը կըտանի:

4. Երեսին, հագուստին կամ ձեռքին վրայ ու-
նեցած աղտը բուքովը կըհանէ:

5. Եղունգներովը գլուխը կըքերէ, եւ երեսին
վրայ քէ որ ուռեցքներ ունի՝ քերելով արին կը-
վազցընէ անոնցմէ:

6. Եղունգներովը ակօսներն ու ականջը կը-
մաքրէ:

7. Չայնով քիբը կըսրբէ ու յետոյ քաշկինակը
կըբանայ կընայի. քէ որ անքաղաքավարութիւնը
քիչ մըն ալ առաջ տանի, մատուրներովը քիբը
կըսրբէ եւ տեսնողներուն սիրտը կըխառնէ:

8. Ստեպ մատուրները քիբը կըտանի ու կը-
խառնէ, կըմաքրէ:

9. Ամեն տեղ կըքքէ. կարծես քէ քաշկինակին
ինչ բանի գործածուիլը չգիտեր:

10. Վրան գլուխն աղտոտ՝ այցելութեան կեր-
բայ:

11. Բերանը բուրդ կառնու կըծամէ ու անդա-
դար շրթունքներուն վրայ կըբերէ, եւ կամ կը-
կտրէ ու ասդիս անդին կընետէ:

12. Նստած արթուն անդադար կըշարժէ:

13. Խօսելու ատեն միշտ ասդիս անդին գլուխը
կըբերայ:

14. Թելերը ծնկուրներուն վրայ կիջեցընէ, եւ
կամ ծունկը երկու ծալելով՝ ձեռուրներովը կը-
բռնէ:

15. Ծունկ ծնկի վրայ կըդնէ, եւ վրայինը ան-
դադար կըշարժէ:

16. Ամենուն առջեւ անձնահաճութեամբ հայլին
կընայի ու իր վրայ ունեցած համարումն յերես
իւր կըյայտնէ:

17. Ուրիշի դիմաց անդադար մագերն, գդակն
ու փողպատը կըշտկըտէ:

18. Մարդու առջեւ խառնափնդոր մագերով
կեցէ:

19. Ոջինչ բաներու վրայ անմտաբար բարձր
ձայնով կըծիծաղի, եւ կամ բերանաբաց զմայլած
կընայի:

20. Քովի խօսողին վրայ ձեռուրները կըպը-
տըտցընէ, երբեմն անոր կոճակները, երբեմն օձի-
քը, եւ երբեմն քեզանիքը կըբռնէ:

21. Շարունակ ժամացուցին շղթան կամ բանա-
լին կըխառնէ. կարծես քէ ժամացույց ունենալը
կուզէ որ ամէնքն իմանան:

22. Երբոր երգի կամ նուագարանի ձայն կառ-
նու, մէկէն կըսկսի ինքն ալ երգել, ոտքը եւ կամ
ձեռքը զարնել:

23. Ոտքովը քովիններուն արթոր կըշարժէ
առանց մտածելու որ զանոնք անհանգիստ կընէ:

24. Երբոր բանի մը հաւնի, կըսկսի ձեռքերը
շփշրփել, գլուխը շարժել:

25. Շատ անգամ աչուրները կըխփխփէ ինչ-
պէս քէ արեւուն սաստիկ լոյսը զինքը նեղէր:

26. Արհամարհանօք ուսերը վեր վեր կառնու:

27. Երբոր բանի մը նեղանայ, ոտքը գետինը
կըզարնէ:

28. Ո՛ր եւ իցէ բանէ որ ձանձրանայ կամ քունը
որ գայ, կըսկսի երկար երկար յօրանջել այլան-
դակ ձայներով՝ առանց ձեռքովը բերանը զոցե-
լու. երբեմն ալ ոչ միայն կըյօրանջէ, այլ եւ քններն
ասդիս անդին կըրկնցընէ: